ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

ՀՀ Արարատի մարզ Մասիսի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **«սննդամթերք»**-ի ձեռքբերման նպատակով հայտարարված **«ԱՄՄՀՄԴ-ԳՀԱՊՁԲ-23/1»** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2023 թվականի հունվարի 13-ին կնքված N ԱՄՄՀՄԴ-ԳՀԱՊՁԲ-23/1** պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) **2023 թվականի սեպտեմբերի 7-ին** կատարված փոփոխության վերաբերյալ **համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:**

Փոփոխության առաջացման պատճառ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության N02/09.3/15652-2023 գրությունը և պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գրությունը:

Փոփոխության նկարագրություն՝ Նկատի ունենալով, որ **«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի կողմից, նոր ուսումնական տարվա առաջին կիսամյակի մեկնարկին նախընթաց, դպրոցական սննդի տրամադրումը պատշաճ կազմակերպելու համար թարմացրվել է երկշաբաթյա ճաշացանկը, լրացուցիչ և չոր սննդի ճաշացանկերը, դրանցում ներառված մթերքների հաշվիչները, մթերքների տեխնիկական բնութագրերը, սննդամթերքի գնումների գործընթացն՝ կնքվել է համաձայնագիր** ապրանքների ձեռքբերման պայմանագիրն ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

Կողմերը, **հիմք ընդունելով պայմանագրով նախատեսված ապրանքները /շաքարավազ/ փոխարինվել է այլ բնութագիր ունեցող ապրանքներով /մածուն/ որոնք միասին գումարային արտահայտությամբ չեն գերազանցում պայմանագրի գնի տասնհինգ տոկոս-ը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքի գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և № 2-ի:** Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 16821 (տասնվեց հազար ութ հարյուր քսանմեկ)**,** որը ներառում է համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, համապատասխան առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 25.12.2023թ.

Փոփոխության հիմնավորում:ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության N02/09.3/15652-2023 գրությունը և ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ. N526–Ն որոշման 56-րդ կետի 3-րդ ենթակետը: **Ձեռք բերվող ապրանքը ներառված է «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի կողմից երկշաբաթյա ճաշացանկում;**

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Հ.Հովհաննիսյան-ին:

Հեռախոս 093 58-31-37

Էլ. փոստ masisvil@schools.am

Պատվիրատու ՀՀ Արարատի մարզ, Մասիս միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Հավելված N 1
N ԱՄՄՀՄԴ-ԳՀԱՊՁԲ-23/1 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Գնման առարկայի						
չ/հ	**Անվանումը**	**չ/մ**	**Քանակը**	**Միավորի գինը (ՀՀ հազ դրամ)**	**Ընդհանուր գումարը (ՀՀ հազ դրամ)**	**Մատակարարման ժամանակացույց 2023թ.**
7	Մածուն	կգ	47.0	0.540	25.380	Մինչև դեկտեմբերի 25-ը
Ընդամենը					25.380	Մինչև դեկտեմբերի 25-ը

Հավելված N 2
N ԱՄՄՀՄԴ-ԳՀԱՊՁԲ-23/1 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ հազ դրամ

Գնման առարկայի						
չ/հ	**CPV կոդը**	**CPV անվանումը**	**չ/մ**	**ընդհանուր գումարը (ՀՀ հազ դրամ)**	**վճարումը նախատեսվում է իրականացնել 2023թ., համապատասխան եռամսյակների, այդ թվում՝**	
					երրորդ եռամսյակ	**չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 25.12.2023թ.**
7	15551600	Մածուն	կգ	47.0	5.380	25.380
	Ընդամենը՝				5.60	25.380